ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ Հ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԴԻՍԵՐՏԱՑԻՈՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտական աշխատող Հայրենադարձ Հ. Նալբանդյանը, որը ծանոթ անձնավորություն է Եգիպտոսի հայությանը՝ որպես բազմամյա մանկավարժ և դասագրքերի հեղինակ, Հայրենիք վերադառնալուց հետո, հնարավորություն ստացավ աշխատելու հայագիտության ասպարեզում՝ թեմա ունենալով «Արաբների վարչական և հարկային քաղաքականությունը Հայաստանում», որը ավարտելուց հետո ներկայացվել էր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտական խորհրդին քննության՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհելու նպատակով։

Հայրենադարձ պատմաբանը, օգտվելով սովետական առաջավոր պատմագիտության սկզբունքներից, կարողացել է գիտական բարեխիղճ վերլուծման ենթարկել արաբների վարչական, տնտեսական ու հարկային քաղաքականությունը Հայաստանում՝ 7-րդ դարի սկզբից մինչև 9-րդ դարի կեսերը (862 թ.), այսինքն՝ մինչև խալիֆաթի կողմից Աշոտ Բագրատունուն իշխանապետ ճանաչելը։

Դիսերտացիայի մեջ քննության առնված պատմական այդ դարաշրջանը չնայած բավականաչափ ուսումնասիրված է՝ Լեոյի «Հայոց պատմություն» (հատոր երկրորդ), ակադ. Հ. Մանանդյանի «Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ», Ս. Պողոսյանի «Պատմական ակնարկ «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի ժամանակաշրջանի մասին», Բ. Առաքելյանի «Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում» աշխատությունների և մի շարք այլ ուսումնասիրությունների մեջ, սակայն թեմայի հետ կապված դեռ բազմաթիվ մութ խնդիրներ կարոտ են լուսաբանության։

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Նալբանդյանն օգտվելով հայկական և արաբական սկզբնաղբյուրներից, փորձել է մտնել այդ մութ խնդիրների մեջ և կարողության չափով լուսաբանել նրանք։

Հայ ժողովրդի պատմության այդ ժամանակաշրջանը լավ հասկանալու համար, հեղինակը իր առջև խնդիր է դրել ուսումնասիրել՝ 1) արաբական տիրապետության բնույթը նրա տարբեր փուլերում, 2) արաբական խալիֆաթի վարած քաղաքականությունը, 3) Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը և 4) Բագրատունիների քաղաքական ինքնիշխան իրավունքի ձեռք բերումը։

Հ. Նալբանդյանի կարծիքով, այդ մեկ ու կես դարյան ժամանակամիջոցում, յուրահատուկ սրությամբ են արտահայտվել քաղաքական, տնտեսական և սոցիալական այն խնդիրները, որոնք դարեր շարունակ ալեկոծել են հայ հասարակական կյանքը՝ սոցիալական հակամարտությունները, օտար տիրակալության դեմ ժողովրդական ըմբոստություններն ու ազատագրական պայքարները, նախարարական տների ներքին բախումներն ու Հայաստանի սահմանակից մեծ տերությունների մրցակցություններն ու ասպատակությունները։

Հայաստանն այդ շրջանում ներկայացնում էր հետևյալ պատկերը. ավատական կարգերը զարգանում էին դեպի ավելի բարձր աստիճան։ Հայաստանի քաղաքական կյանքում կատարվում են հետևյալ հիմնական տեղաշարժերը. նախարարական տներից ոմանք կորցնում են իրենց երբեմնի իշխանությունը՝ կամ քայքայվում են և ընդմիշտ դուրս գալիս քաղաքական ասպարեզից և կամ ընկնում մեծ տներից կախվածության մեջ։

Հ. Նալբանդյանը, խոսելով արաբական

նվաճումների առաջին շրջանի մասին, զարգացնում է այն տեսակետը, որ «արաբների առաջին արշավանքները Հայաստան բացահայտ ավարառական բնույթ ունեին»։

Հ. Նալբանդյանը մանրամասն վերլուծման ենթարկելով արաբական նվաճումները, տալիս է նրանց առանձնահատկությունները։ Հեղինակի կարծիքով, Հայաստանի ներքին քաղաքական առանձնահատկությունները, նրա ռազմա-ստրատեգիական և առևտրական հնագույն երկիր լինելը և Բյուզանդիայի և Խազարների տիրակալական ձգտումները պատճառ դարձան, որ արաբները Հայաստանի նկատմամբ վարեն մի առանձին քաղաքականություն։

Արաբները Հայաստան մտնելով, հայ նախարարական տների ինքնավարական իրավունքները օրինականացրին։ Հայ նախարարները պահպանեցին իրենց ավատական կալվածներն ու իշխանությունը։ Արաբները հարկադրված էին նման քաղաքականություն վարել, որովհետև ի վիճակի չէին Հայաստանում բռնի ուժով ընկճել երկրի իշխանների ռազմական ուժը։ Արաբները լուրջ կերպով նկատի էին առնում ո՛չ միայն ֆեոդալների հրամանի տակ կռվող ազատանի գնդերն ու այրուձին, բերդերն ու ամրությունները, այլև հայ ժողովրդի դիմադրական ուժը։ Պատմական հարուստ փաստերը խոսում են այն մասին, որ արաբներին քիչ անգամ է հաջողվել բռնի ուժով տիրանալ հայկական ամրոցներին, և եթե հաջողվել է, ապա այդ՝ խաբեության և կաշառքի զարտուղի միջոցներով։

Ստեղծված շատ ու քիչ խաղաղ պայմաններում, առևտրի և արհեստների զարգացումն ու համքարությունների ձևավորումը պատճառ դարձան քաղաքային բնակչության ստվարացմանը Հայաստանում արաբական շրջանում։

Արաբները նվաճած երկրների հողերը թեև իրենց անմիջական սեփականությունը չէին դարձնում, բայց խլում էին հողերի տնօրինման գերագույն իրավունքները։ Արաբներին հետաքրքրում էր ոչ թե հողը, այլ նրա եկամուտը, ուստի և նրանք սեփականատիրոջ կալվածներով հետաքրքրվում էին այն չափով, որ չափով նրանք հայթայթում էին պատրաստի հարստություններ։

Խալիֆաթի եկամուտները, հիմնականում, գոյանում էին «սատակա»յից (մուսուլմանների վճարած հարկերը), «ղանիմա»յից (պատերազմի ավար), «ֆե»յից (խալիֆայական հպատակ ոչ մուսուլման ժողովուրդներից գանձված կանոնավոր հարկերը) և, վերջապես, առևտրից վերցրած մաքսային տուրքերից։

Արաբների հարկային քաղաքականությունը հատուկ գլխի նյութ դարձնելով, Հ. Նալբանդյանը արաբ պատմիչների աշխատությունների հիման վրա նշում է, որ ոստիկանները դաշնագրեր էին կնքում նվաճված քաղաքների ազնվականության հետ՝ ապահովելով բնակիչների կյանքն ու ինչքը, այն պայմանով սակայն, որ նրանք խալիֆաթին վճարեն պահանջվող հարկերը։

Հեղինակը արաբական տիրապետությունը բաժանում է հինգ շրջանների, նկատի առնելով հարկային քաղաքականության բնույթը. 1) թեթև հարկերի և ավարառության շրջան (640—652 թ. թ.), 2) հարկերի նախնական դանձման շրջան (652—686 թ. թ.), 3) հարկերի ծանրացման շրջան (686—724 թ. թ.), 4) խիստ հարկապահանջության շրջան (724—750 թ. թ.), և 5) Աբբասյանների շրջան (750—862 թ. թ.)։

Եթե համեմատելու լինենք խալիֆաթի հարկային քաղաքականությունը Օմայանների և Աբբասյանների դարաշրջաններում, կտեսնենք, որ Բաղդադի խալիֆաթում, բռնատիրական ռեժիմի հարաճուն զարգացման հետ միասին, Հայաստանում ծանրանում է հարկային լուծը, հարկերը դանձում էին իրենք՝ արաբ հարկահավաքները, հաճախ անօրինակ բռնությունների դիմելով։ Հայերի կողմից հարկերի վճարման դադարեցումը Բաղդադում դիտվում էր որպես ապստամբություն։

Արաբները Հայաստանը նվաճելով, նրա առանձին մարզերում բնակեցնում էին մուսուլմաններին և ստեղծում բազմաթիվ էմիրություններ։

«Արաբական էմիրությունների հաստատումը Հայաստանում» խորագիրը կրող չորրորդ գլխում, հեղինակը ցույց է տալիս՝ թե ինչպես արաբները ձեռնամուխ էին եղել հայ ժողովրդի համար չափազանց վտանգավոր մի քաղաքականության. նրանք գրավում էին հայ իշխանների հողերը, վերցնում էին հայ իշխանների իրավասություններն ու հաստատում բազմաթիվ էմիրություններ։ Այս վտանգը սպառնում էր հայ ժողովրդի քաղաքական իրավունքին և նրա էթնիկական անաղարտությանը։ Հայաստանում հաստատված արաբ բնակիչները կրկնակի վտանգ էին ներկայացնում, նրանք միանում էին արշավող ոստիկաններին և գործակցում նրանց ավերումի և ավարի գործում։ Մուսուլման էմիրների և զորագնդերի անվերջ խռովությունները չափազանց վնասակար հետևանք էին ունենում հայ ժողովրդի և, առաջին հերթին, հայ աշխատավոր գյուղացիության համար, որովհետև ոտնակոխ էին լինում արտերը, բերքը փչանում էր և բնակությունները քանդվում։

Բագրատունիներն ու Արծրունիները օգտվելով խալիֆաթի ներքին թուլացումից, ճկուն քաղաքականությամբ կարողացան ստեղծել իրենց ինքնակալությունը։

Հեղինակը հատուկ գլխի նյութ է դարձրել հայերի ապստամբություններն արաբական տիրապետության դեմ, ցույց տալով նրանց ազատագրական բնույթը։

Ազատագրական այդ շարժումների ձախողումը հեղինակը բացատրում է արաբների ռազմական ուժերի գերազանցությամբ և հայ ռազմական ուժի մասնատվածությամբ։ Մանր անդրադարձություն ունեցավ առանձնապես Բագրևանդի ապստամբությունը, որի անհաջողությունից հետո՝ 1) արաբական լուծը էլ ավելի ճնշիչ դարձավ հայ ժողովրդի համար և 2) բազմաթիվ հայ նախարարություններ կործանվեցին, որոնց թվում Մամիկոնյանները և ազատ ասպարեզ բացվեց Բագրատունիների բարձրացման համար։

Անժխտելի փաստ է, որ հայ ժողովուրդը հաշտ աչքով չէր նայում արաբական խալիֆաթի վարչական ու հարկային քաղաքականությանը. նա ավելի քան երկու դար պայքարեց նրա դեմ և դրանով նախապատրաստվեց հայ պետականության վերաստեղծումը։

Այս վերջին հարցը հեղինակը քննության է առել դիսերտացիայի վերջին գլխում, որտեղ խորազնին կերպով շոշափվում են Բյուզանդիայի և խալիֆաթի պայքարները, խալիֆաթի կազմալուծման ընթացքը, հայկական իշխանական տների կենտրոնացումը և Բագրատունիների բարձրացումը։

Հ. Նալբանդյանը հարուստ փաստարկումներով կարողացել է ցույց տալ հայ իշխանական որոշ տների թուլացման, ինչպես և Բագրատունիների և Արծրունիների ուժեղացման պատճառները։ Նա միաժամանակ ցույց է տալիս Բագրատունիների և Արծրունիների փոխհարաբերությունները Բաղդադի հետ, Բագրատունիների գերիշխանության դրական կողմերն ու հաջողությունները՝ հայ պետականության վերահաստատման գործում։

«Արաբների վարչական ու հարկային քաղաքականությունը Հայաստանում» դիսերտացիայում շոշափված են բազմաթիվ այլ հարցեր ևս, որոնց հիշատակումը հնարավոր չէ ներկա հոդվածում։

Հ. Նալբանդյանի դիսերտացիոն աշխատանքը, անկասկած, ունի գիտական արժեք, հեղինակը բազմակողմանի և ճշմարտացի վերլուծման է ենթարկում հայ ժողովրդի պատմության պակաս լուսաբանված շրջաններից մեկը՝ արաբական շրջանը, որը հեղինակի խոսքերով ասած՝ «հայ ժողովրդի գոյության սպառնացող առաջին իրական և շուրջ վտանգը կազմեց»։

Հ. Նալբանդյանի ներկա ուսումնասիրությունը պաշտպանության դրվելը լավագույն ապացույցն է այն հոգատարության և ուշադրության, որ ցուցաբերվում է մեզ մոտ հայրենադարձ մտավորականների նկատմամբ։ Հ. Նալբանդյանը տասնյակ տարիներ աշխատել է Եգիպտոսում հայոց պատմության գծով, փորձել է օգտակար ուսումնասիրություններ կատարել, սակայն պատշաճ նյութական և բարոյական աջակցություն չունենալով, լճացել էր այնտեղ։ Հայրենիքում, հայագիտության ասպարեզում իր կատարած բարեխիղճ աշխատանքով նա կարողացավ դրսևորել իր ունակությունները և արժանապես գնահատվեց. նրան շնորհվեց պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

Հ. Թ.